17627

1934 р.

324
Ш-11

15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

# ԱՍՖԽՀ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ - ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

324
Կ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՍՖԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲՅՈՒՐՈՅԻ
Թիֆլիս—1934 թ.

17627
324
Ա-11
15 FEB 2013

Պատ. խմբագիր՝ Ա. Աղամյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Գամառով
Սրբագրիչ՝ Ս. Գովլաքյան
Հանձնված է արտադրության 8/X
Ստորագրված է տպագրության 14/X
Տպ. նշանների թիվը 1 տպ. թերթում—30,000
1, 7/8 տպ մամուլ
Գլավլիտի լիազոր—A—3843
Տիրաժ 2000
Պատվեր № 2685
Հերթական № 99

ՀՍՍՌ ԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ЗАГС-Арм. ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
36066 - 62

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան Կարմրադրոշ տպարան «Զարյա Վոստոկա»

26 SEP 2006

# 1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ՀԱՇՎԵՏՈՒ – ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Համաձայն Անդրկենտգործկոմի Նախագահության 1934 թ. օգոստոսի 15-ի վորոշման խորհուրդների հաշվետու-վերընտրական կամպանիան ԱՍՖՍՀ հանրապետություններում պետք է սկսվի 1934 թ. հոկտեմբերի 15-ից:

Այդ պատճառով անհրաժեշտ է անհապաղ ծավալել տեղերում խորհուրդների և նրանց մասսայական կազմակերպությունների աշխատանքը՝ վորպեսզի ինչպես հաշվետու, այնպես և վերընտրական կամպանիան անցկացնել կազմակերպչորեն, ներգրավելով ընտրողների ամբողջ մասսան:

Դրա համար նախ անհրաժեշտ է ըստ հարկի՝ կազմակերպել նախապատրաստական աշխատանքը:

Հաշվետու – վերընտրական կամպանիայի նախապատրաստական աշխատանքը կայանում է, գլխավորապես ընտրական հանձնաժողովի կազմակերպման, ընտրական կամպանիայի անցկացման, պլանի պատրաստման, նշանակելով կայուն ժամկետներ, ընտրողների հաշվառման կազմակերպման, ձայնազուրկների ցուցակների պատրաստման, շրջաններին, քաղաքների և գյուղերի բնակչության մայրենի լեզվով ընտրական գրականությամբ ապահովման մեջ և այլն:

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ընտրական հանձնաժողովները կազմվում են բոլոր գյուղխորհուրդների, քաղխորհուրդների և շրջխորհուրդների, շրջգործկոմների և այլ մարմինների առընթեր և նր-

րանց վրա դրվում է խորհուրդների և խորհուրդների հա-
մազումարների ընտրությունների վերաբերյալ միջոցա-
ռումների անցկացումը: Այդ հանձնաժողովների կազմը վո-
րոշված է օրենքով և նրանց մեջ մտնում են՝ համապատաս-
խան գործադիր կոմիտեյի և խորհրդի, պրոֆմիությունն-
երի, ՀԼԿՅԵՄ-ի, քաղբաժինների, Կարմիր բանակի, բան-
վորների, կոլտնտեսականների ներկայացուցիչները: Բացի
այդ, օրենքը պահանջում է ապահովել ազգային փոքրա-
մասնությունների և աշխատավոր կանանց ներկայացուցիչ-
ների մասնակցությունը բոլոր ընտրական հանձնաժողովնե-
րում:

Այդ հանձնաժողովներն անհրաժեշտ է կազմակերպել
հեղինակավոր և աշխատունակ անձերից, վորոնք ի վիճա-
կի կլինեն ղեկավարելու այդ կարևոր քաղաքական կամ-
պանիան:

Հարկավոր է պայքարել հանձնաժողովների ձևական
անդամակցության հանդեպ և աշխատել, վորպեսզի յու-
րաքանչյուր անդամ ակտիվորեն մասնակցի աշխատանքին և
կրի պատասխանատվություն նրան հանձնված գործի հա-
մար: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է լինի
այնպես պատրաստված, վորպեսզի կարողանա պարզ պատ-
կերացնել իրեն ընտրական հանձնաժողովի նշանակությու-
նը, յուրացնի ընտրական հրահանգի իմաստը և կարո-
ղանա ճշգրիտ մեկնաբանել նրա յուրաքանչյուր հոդվածը:
Դրա համար ընտրական հանձնաժողովները կազմակերպելիս
անհրաժեշտ է հանձնաժողովների անդամների համար անց-
կացնել հրահանգչական խորհրդակցություններ և ամբող-
ջովին մշակել հրահանգը և բոլոր ընտրական օրենսդրու-
թյունը ինչպես ԱՍՖՍՀ-ի, այնպես և համապատասխան
հանրապետության համար:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԻ ԿԱԶՄԵԼԸ

Կամպանիայի աջող անցկացման համար յուրաքանչյուր
ընտրական հանձնաժողով պետք ունենա իր անելիքների



մասին կայուն պլան, նշանակելով վերջինում ճիշտ ժամկե-
տներ այս կամ այն աշխատանքի անցկացման ուղիս վերա-
բերյալ:

Պլանում պետք է նախատեսնել, ի միջի այլոց, նաև
տեղական ուժերի ոգտագործման և կենտրոնի, քաղաքի,
շրջանի և այլն ուժերի ներգրավման կարգը: Քաղաքներում
և շրջանային կենտրոններում կազմակերպել բանվորական
բրիգադաներ և ուղարկել նրանց գյուղերը, գյուղական
կազմակերպություններին ոգնելու համար: Հանրապետա-
կան կենտրոնները պետք ոգնության գան շրջաններին իրենց
պատասխանատու աշխատավորներով, վորոնք պետք լինեն
տեղերում վոչ միայն վերընտրությունների, այլ և հաշվե-
տու — կամպանիայի շրջանում: Այդ աշխատավորները, ի-
հարկե, նախորոք պետք է հրահանգված լինեն հատուկ
խորհրդակցություններում և ապահովվեն համապատասխան
ընտրական գրականությամբ:

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑԵՎ ԶԱՅՆԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Ընտրական հանձնաժողովների (քաղաքային, շրջանա-
յին և գյուղական խորհուրդների) համար կարևոր աշխա-
տանք է հանդիսանում՝ ընտրողների հաշվառման կազմա-
կերպումը և ընտրական իրավունքներից զրկված անձանց
ցուցակների կազմելը:

Ընտրական ցուցակները կազմելիս անհրաժեշտ է հաշվի
առնել այն փոփոխությունները, վորոնք տեղի յեն ունեցել
բնակչության կազմի մեջ սկսած նախնական ընտրություն-
ների ժամանակ, այն է՝ չորս տարվա ընթացքում, և մե-
խանիկորեն, առանց փաստաթղթերի չարտագրել հին ցու-
ցակները:

Ընտրողների ցուցակները պետք է քննվեն ընտրական
հանձնաժողովի նիստում ակտիվի ներգրավմամբ այն ուղ-
ղությամբ, վորպեսզի այդ ցուցակներում մտցված
լինեն նոր ընտրողները՝ ինչպես այն անձանց թվից, վորոնք

ընտրությունների պահին արդեն հասել են ընտրական տարիքին, այնպես և այն անձանց թվից, վորոնք համապատասխան կարգով վերականգնված են ընտրական իրավունքներում, և նույն ցուցակներից դուրս հանված լինեն այն անձինք, վորոնք զրկվում են ընտրական իրավունքներից ըստ նոր ընտրական հրահանգի:

Ընտրողների ցուցակը կազմվում և հաստատվում է քաղաքային և գյուղական ընտրական հանձնաժողովների կողմից, իսկ ձայնազուրկների ցուցակները խորհուրդների ընտրությունների պատրաստման և անցկացման շրջանում կազմվում են գյուղական, քաղաքային ընտրական հանձնաժողովների կողմից և հաստատվում գյուղական վայրերում և քաղաքներում (վորոնք ունեն գյուղխորհուրդներ) շրջգործկոմների կողմից, իսկ քաղաքներում, վորտեղ ունեն քաղաքային խորհուրդներ, և նրանց կցված գյուղերում քաղաքային խորհուրդների կողմից:

Ձայնազուրկների ցուցակները պետք է հրապարակվեն վոչ ուշ, քան 15 որ մինչ համապատասխան խորհրդի ընտրությունները, այդ ցուցակները հայտարարվում են մամուլում, կախ են արվում աչքի ընկնող տեղերում և այլն:

Ինչպես ընտրական իրավունքներից զրկումը, այնպես և վերականգնումն այդ իրավունքներում պետք է տեղի ունենան փաստաթղթային տվյալների հիման վրա և լիակատար համապատասխանեն այս առթիվ գոյություն ունեցող որենքներին: Հարկավոր է աշխատել, վորպեսզի վոչ մի աշխատավոր դուրս չմնա ընտրողների ցուցակից և, ընդհակառակը, վորպեսզի վոչ մի դասակարգային թշնամի, վորը ըստ որենքի յենթակա յե զրկման ընտրական իրավունքներից չկարողանա խցկվել ընտրողների շարքերը: Այս դեպքում պետք է լավ հիշել կուլակի բնութագիրը, վորը տրված է ընկ. Ստալինի կողմից՝ «թշնամին հասկացել է փոխված դրությունը, հասկացել է գյուղի նոր իրավակարգի ուժն ու կարողությունը, փոխել է իր գործելակերպը՝



կոլտնտեսությունների դեմ ուղղակի գրոհ տալուց անցել է ընդհատակյա աշխատանքի»...

. . . . . . . .

. . . . . . . .

. . . . . . . .

...Ներկայիս կուլակները և յենթակուլակները, գյուղի ներկայիս հակախորհրդային տարրերը մեծ մասամբ «մեղրածոր», համարյա «սուրբ» մարդիկ են:

Սակայն, դասակարգային թշնամուն մերկացնելու առթիվ տարված պայքարում չի թույլատրվում անզգուշաբար ձայնազուրկների ցուցակում մտցնել և այն քաղաքացիներին, վորոնք ըստ որենքի չեն կարող զրկվել ընտրական իրավունքներից:

Անցյալ տարիների փորձառությունը ցույց է տալիս, վոր, յեթե տեղական խորհուրդներից մի քանիսը, թույլ պայքարելով դասակարգային թշնամի տարրերի հանդեպ, չեն կարողացել լիակատար ի հայտ բերել բոլոր կուլակներին, սակայն մյուս խորհուրդները, ընդհակառակը, ընկնելով ձայնազուրկների խոշոր տոկոսի յետևից, կուլակների հետ միասին մի կույտի մեջ ձգեցին նաև այն անձանց, վորոնք չեն կարող զրկված լինել ընտրական իրավունքներից:

Առաջիկա ընտրական կամպանիայում հարկավոր է ընտրական հանձնաժողովների աշխատանքը կազմակերպել այնպես, վորպեսզի տեղ չունենան վորևէ ապորինի գործողություններ և անհապաղ ուղղել թույլ տված սխալները:

Դրա համար հարկավոր է դարձնել հատուկ ուշադրություն բողոքների ընդունման ու լուծման աշխատանքի պատշաճ կերպով դրվածքի վրա, ստուգել ընտրական իրավունքներից զրկման մոտիվները փաստաթղթերով, ուշադրությամբ քննություն անել բողոքում մատնանշված ապացույցները և այդ բողոքները իր յեզրակացությամբ ժամանակին հղել պատշաճ քաղաքային խորհրդին (քաղաք-

ներում) կամ շրջանային գործադիր կոմիտեներին (գյու-
ղերում շրջանային ընտրական հանձնաժողովի միջոցով)։

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԱՆՈԹԱՑՈՒՄԸ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ընտրողների և ձայնազուրկների ցուցակների կազմելու գործի լավագույն կազմակերպման, այսպիսի կարեվոր մասսայական քաղաքական կամպանիայի, ինչպիսին է ընտրական կամպանիան, աջող անցկացնելու, այս կամպանիային աշխատավորների հոծ մասսաները ներգրավելու համար, անհրաժեշտ է ձեռք առնել այնպիսի միջոցներ, վորպեսզի յուրաքանչյուր աշխատավոր լավ իմանա ընտրական օրենսդրությունը և հասկանա իր իրավունքներն ու պարտականությունները ընտրական կամպանիայում։ Դրա համար անհրաժեշտ է բնակչության ընդարձակ կերպով ծանոթացնել ընտրական օրենսդրության, վերադաս մարմինների վորոշումների և շրջաբերականների հետ, հարկավոր է կարգավորել խորհուրդների վերընտրությունների և այլնի վերաբերյալ հանրամատչելի գրականության հրատարակումը բնակչության մայրենի լեզվով։

## ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Հաշվետու – վերընտրական կամպանիան կազմակերպչորեն անցկացնելու համար անհրաժեշտ է քաղաքային և գյուղական խորհուրդների տերրիտորիան բաժանել առանձին ընտրական շրջանների, վորպիսիք կարող են վորոշվել կամ ըստ արտադրական կամ ըստ տերրիտորիալ հատկանիշանի։

Քաղաքներում և քաղաքային վայրերում նաև խոշոր խորհտնտեսություններում ընտրական ժողովները կազմվում են ըստ արտադրական միավորների (ձեռնարկությունների, հիմնարկների), ըստ պրոֆեսիոնալ միությունների և խոշոր խորհտնտեսությունների (կամ ըստ ագարակների)։



Քաղաքային խորհրդի կամ շրջանային գործադիր կոմիտեյի թույլտվությամբ խոշոր արդյունաբերական ձեռնարկներում ընտրությունները կարող են տարվել ըստ առանձին ցեխերի։

Այդպիսի շրջանները կոչվում են ընտրական շրջաններ ըստ արտադրական հատկանիշանի։

Քաղաքների մնացած քաղաքացիները, վորոնք չեն աշխատում ձեռնարկներում կամ հիմնարկներում և չեն կազմակերպված պրոֆմիություններում, այն է՝ տնայնագործները, տնային տնտեսուհիներ և այլն—մասնակցում են ընտրություններին կամ մնացած ընտրողների հետ միասին ըստ արտադրական պրոֆմիութենական միավորների, կամ նրանց համար հրավիրվում են հատուկ ընտրական ժողովներ ըստ տերրիտորիալ միավորների (շրջաններ և այլն)։

Գյուղերում, վորոնք ըստ ընտրական նորմայի կարող են ընտրել թեկուզ խորհրդի մեկ պատգամավոր, կազմակերպվում է մեկ ընտրական շրջան, խոշոր գյուղերում, ընտրողների հարմարության համար (շենք, տարածության հեռավորությունը և այլն) կարող է կազմակերպվել, տեղական պայմաններից կախված, յերկու, յերեք և ավելի ընտրական շրջաններ, սակայն յուրաքանչյուր շրջան ընտրում է պատգամավորներ համաձայն ընտրական նորմայի։ Փոքրիկ գյուղերը, վորոնց բնակչությունը պակաս է մեկ պատգամավոր ընտրելու համար, կամ միանում են հարեվան խոշոր գյուղի հետ և ընտրությունները կատարվում են այդ գյուղի բնակչության հետ միասին, կամ թե մի քանի այդպիսի գյուղեր միանում են միմիանց հետ, կազմակերպելով մեկ ընտրական շրջան, ընտրում են իրենց պատգամավորը բոլոր միացված գյուղերից։

Մեքենա-տրակտորային կայանների և վոչ խոշոր խորհտնտեսությունների բանվորները մասնակցում են մոտակա գյուղական խորհրդի ընտրություններին։

Կոլտնտեսականները ընտրում են խորհրդի պատգամավորներ գյուղի մնացած բնակչության հետ:

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՑ:

Կարմիր բանակի կադրային մասերը և տերրիտորյալ մասերի անփոփոխ կազմը ընտրում են իրենց պատգամավորներին ինքնուրույն, յեթե ընտրողների թիվը զորամասում բավարար է պատգամավոր ընտրելու համար. յեթե ընտրողների թիվը պակաս է, այդ մասը ընտրությունների համար միանում է մյուս մասերի հետ, վորոնք գտնվում են նույն վայրում, մյուս մասերի բացակայության կամ այլ դեպքերում, յերբ միացումից հետո ընտրողների թիվը չի հասնի այն քանակին, վորպիսին պահանջվում է մեկ պատգամավոր ընտրելու համար, մասը և, միացված մասերը ընտրում են խորհուրդի մեկ պատգամավոր:

Կարմիր բանակի տերրիտորյալ մասերի փոփոխական կազմը ընտրում է պատգամավորներ մնացած բնակչության հետ միասին:

## ՇԵՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿԸ ՆՇԱՆԱԿԵԼԸ:

Շրջանի, քաղաքի և գյուղի տերրիտորիան ընտրական շրջանների ըստ արտադրական կամ տերրիտորյալ հատկանիշանի բաժանելուց հետո, անհրաժեշտ է ընտրական հանձնաժողովներին հոգ տանել քաղաքացիների ժողովների (հաշվետվության և ընտրական) համար շենքի մասին: Ընտրական շրջաններն անհրաժեշտ է վորոշել իր ժամանակին, հաշվետու-վերընտրական կամպանիայից բավական առաջ: Ժողովների համար ընտրել հարմար, ընտրական շրջանի կենտրոնում գտնվող շենքեր, վորոնք կլինեն մոտակյա շրջանի բոլոր ընտրողների համար: Շենքը պետք լինի բավականին ընդարձակ, վորպեսզի կարողանա զետեղել բոլոր ընտրողներին: Ժողովները պետք է նշանակվեն այնպիսի ժամերին, վորպեսզի բոլոր ընտրողները կարողանան առանց իրենց հիմական աշխատանքին վնաս հասցնելու գալ ժողով:



## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ:

— Ժողովի օրվա և տեղի մասին ընտրողներին պետք է իրազեկացվեն ամենաքիչը հինգ օր առաջ, վորպեսզի ունենան բավականին ժամանակ ծանոթանալ այն հարցերին, վորոնք պետք է քննության առնվեն ժողովում: Ժողովի մասին ընտրողներին տեղեկացվում են՝ յուրաքանչյուր ընտրողին անվանական ծանուցագիր ուղարկելու միջոցով: Ծանուցագրերը պետք է կազմել ճշտիվ, առանց սխալների, նշելով ընտրողի ճիշտ հասցեն, անունը և ազգանունը: Այս աշխատանքը հարկավոր է տեխնիկապես կազմակերպել այնպես, վորպեսզի խուսափել այն վրիպումներից, վորոնք տեղի յեն ունեցել նախորդ ընտրություններում, յերբ հաճախակի ծանուցագրերը կազմվելիս են յեղել այն աստիճանի անհոգությամբ, վոր անհնարին էր դարձնում նրանց հանձնումը ընտրողներին: Ինչպես ծանուցագրերի լրացման, այնպես և նրանց ցրման և ընտրողներին հանձնելու համար հարկավոր է օգտագործել հատուկ նշանակված ակտիվ քաղաքացիներին, նամանավանդ յերիտասարդությունից նշանակածներին:

Բացի ծանուցագրերի ուղարկումից, ինչպես հաշվետու, այնպես և ընտրողական ժողովների տեղի և օրվա մասին անհրաժեշտ է վաղօրոք հայտարարել լրագրերում, կախ տալ հայտարարություններ հիմնարկների, հրապարակների և փողոցների աչքի ընկնող տեղերում և այլն:

Բոլոր այս միջոցառումներն անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի ապահովել ընտրողների հարյուրտոկոսային ներկայությունը ժողովներում: Ընտրական հանձնաժողովներին հարկավոր է լավ հիշել, վոր հաշվետու-վերընտրական կամ

պանիան համարվում է կարևորագույն քաղաքական կամպանիա, անհրաժեշտ է ապահովել բոլոր աշխատավոր բնակչության մասնակցությունը նրանում:

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ:

Այս գործում ընտրական հանձնաժողովներին մեծ օգնություն կարող են և պիտի ցույց տան հասարակական կազմակերպությունները, այն է՝ կոլտնտեսությունները, պրոֆմիությունները, կոմյերիտմիությունը, կոոպերացիան, ՊԱՋԸ–Ավիաքիմի և այլն: Այս կազմակերպությունները պետք է հաշվետու–վերընտրական կամպանիայի շուրջը մոբիլիզացիայի յենթարկեն իրենց անդամների ուշադրությունը, լսեն առանձին պատգամավորների հաշվետվությունը, կազմակերպեն ցուցահանդեսներ խորհուրդների նվաճումների մասին, ընտրությունների մասին իրենց անդամների մեջ և կազմեն զրույցներ, գլխավորեն պայքարը կանանց հետագա ազատագրման համար, գլխավորեն պայքարը լոդրների (դատարկապորտների), սոցիալիստական սեփականության վատնողների, սպեկուլյանտների, կուլակների և թշնամի դասակարգերի մնացորդների դեմ:

## ՄԱՍՍԱՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՇՎԵՏՈՒ–ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԵՋ:

Հաշվետու–վերընտրական կամպանիայի նկատմամբ մասսայական աշխատանքը լավ հիմքերի վրա դնելու համար հարկավոր է կազմակերպել խրճիթ–ընթերցարաններում, գյուղացու տներում և հասարակական կազմակերպություններում բացատրական–ագիտացիոն աշխատանք: Այդ աշխատանքի հիմքում պետք է դնել ընտրությունների հետ կապված հարցերի մշակումը, հատուկ գրականություն ձեռք բերելն ու տարածելը, խորհուրդների գործունեության և նրանց հերթական խնդիրներին նվիրված



պատի լրագրերի հատուկ համարների լույս ընծայումը, ներկայացումների, հարցերի ու պատասխանների յերեկոների ընթերցման կազմակերպումը, կինոյի և ռադիոյի տեղական լրագրերի և հանդեսների ղեկավարող հոդվածների ընթերցման կազմակերպումը, կինոյի և ռադիոյի օգտագործումը, պլակատների ու լոզունգների փակցնումը զանազան տեղերում և այլն:

Ընտրական կամպանիայի աջող անցկացման և նրա մեջ կանանց լայնորեն ներգրավելու համար, թույլատրվում է, յելնելով տեղական պայմաններից, կազմել կանանց առանձին ժողովներ: Հարկավոր է իր ժամանակին հոգ տանել՝ հաշվետու և ընտրական ժողովների ընթացքում միրյա մսուրներ, մանկապարտեզների կազմակերպման մասին: Ընտրական հանձնաժողովները հաշվետու և ընտրական ժողովների գործի կազմակերպման և անցկացման մեջ պետք է ներգրավեն զորացրված կարմիրբանակայիններին, վորոնք բանակում անցել են խոշոր քաղաքական դպրոց և ի վիճակի յեն ցույց տալ այս գործում խոշոր օգնություն:

Հարկ չկա խոսելու ընտրական կամպանիայում կոմյերիտմիության և աշխատավոր յերիտասարդության դերի մասին: Մանավորապես նրանց դերը նախընտրական մասսայական միջոցառումներում, ընտրական հանձնաժողովներին օգնություն հասցնելու գործում, ընտրողների նակազների վերաբերյալ արված առաջարկությունների և խորհուրդների նոր կազմի թեկնածությունների նախապատրաստման և քննության մեջ:

Ընտրական կամպանիայում պետք է ակտիվորեն մասնակցի նաև ինտելիգենցիան, նամանավանդ գյուղում (ուսուցիչներ, գյուղատնտեսներ, բժիշկներ, ճարտարապետտեխնիկական աշխատավորներ և այլն):

## ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ:

Ընտրական հանձնաժողովները պետք է լայնորեն ներգրավեն աշխատավոր մասսաները և ուժեղացնեն իրենց քաղաքական ակտիվությունը, վորը կառաջացնի նոր արտադրական ենտուզիազմ:

Գերատեսչությունների և տնտմարմինների նկատմամբ ընտրական հանձնաժողովները պետք է ծառայեն վորպես տոլկաչներ (գլխավորողներ), ոգնել նրանց ամրացնել մասսաների աճած արտադրական ակտիվությունը և ծավալել իր հերթին արտադրական ագիտացիա, վորն ուղղված կլինի արտադրական խնդիրների ռեալ կատարմանը:

Այդ նպատակի համար հարկավոր է ոգտագործել բոլոր տեսակի ագիտացիաները՝ մամուլ, կինո, եստրադա, թատրոններ, գեղարվեստական գրականություն և այլն:

Բանվորների, կոլտնտեսականների և մնացած աշխատավորների արտադրական ակտիվությունը սոցիալիստական շինարարության զանազան ճյուղերում ուժեղացնելու համար անհրաժեշտ է կիրառել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ արտադրական սոցմրցման պայմանագրերի կնքումը, հարվածային բրիգադների կազմակերպումը, արդֆինպլանների կատարումը ժամկետից առաջ, պարտավորության ընդունումը, արտադրությունում առաջացած ճեղքվածքների լիկվիդացիան, բանվորների ռացիոնալ առաջարկությունների և գյուտերի հավաքումը, արտադրական փոխադարձ ոգնության և բուքսիրի կազմակերպումը և այլն:

Խորհուրդների հաշվետու կամպանիան պետք է տարվի կուսակցության 17-րդ համագումարի վորոշումների իրագործման նշանաբանի տակ, խորհուրդները պետք է պատրաստեն ընտրողների համար զեկուցում առ այն, թե ինչպես են իրենք կազմակերպել մասսաներին այդ վորոշումները կյանքում կիրառելու համար, ինչպես են վերակառուցել խորհուրդների աշխատանքը և խորհուրդների կազմակերպչական ղեկավարությունը: Խորհուրդները ընտրության բացատրական և կազմակերպչական աշխատանքը պետք է կապեն խորհուրդների տարվող ճյուղային մրցումների հետ:

Հաշվետվության ընթացքում հարկավոր է լայն կերպով ծավալել սոցմրցումը և սոցիալիստական աշխատանքի այլ ձևերը ինչպես ընտրական հանձնաժողովների և նրանց առանձին անդամների, նույնպես յև խորհուրդների և նրանց մասսայական կազմակերպությունների (սեկցիաների, պատգամավորական խմբակների և այլ) աշխատանքում:

# II. ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՄՊԱՆԻԱ

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ:

Հաշվետու-վերընտրական կամպանիայի համար ուշադիր կերպով նախապատրաստվելուց հետո անհրաժեշտ է անմիջապես անցնել հաշվետու ժողովների անցկացմանը:

Այդ ժողովներում իրենց աշխատանքի մասին հաշիվ պիտի տան վոչ թե միայն խորհուրդները, այլ և վերստուգիչ հանձնաժողովները, խորհուրդների սեկցիաները, պատգամավորական խմբակները և խորհուրդների առանձին պատգամավորները: Այս գործում խորհուրդներին պետք է ոգնության գան այն աշխատավորները, վորոնք կցված են նրանց կենտրոնի կամ շրջգործկոմի կողմից, ոգնության պետք է գան նույնպես առանձին կազմակերպությունների ներկայացուցիչները, որինակ՝ գյուղերում-կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, բժշկական կետերի, դպրոցների, գյուղատնտեսական կետերի, կոոպերացիայի և այլն կազմակերպությունների, վորոնք գտնվում են գյուղխորհրդի սահմաններում:

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ:

Նախ քան ընդհանուր հաշվետու ժողովների սկսվելը,
որոնք կազմակերպված են ընտրական հանձնաժողովների
կողմից, խորհուրդների հաշվետվությունը լսելու համար
անհրաժեշտ է անցկացնել պատգամավորների աշխատանքի
ստուգում: Յուրաքանչյուր գործարան, ցեխ, նայեվ յու-
րաքանչյուր կոլտնտեսություն, խորհտնտեսություն և այլն
պետք է ստուգեն իրենց պատգամավորների աշխատանքը
խորհրդում: Պատգամավորը պետք է պատմի իր ընտրող-
ներին թե ինչ է արել ինքը խորհրդում և ինչպես է աշխա-
տել: Ինչ մասնակցություն է ունեցել արդֆինպլանների
կատարման, պետական ապարատի բարելավման և նրա թե-
րությունների վերացման գործում և ընտրողների կուլտ-
կենցաղային սպասարկման բարելավման ասպարեզում
տարված պայքարում: Իսկ գյուղում անհրաժեշտ է պատ-
գամավորի աշխատանքի ստուգման ժամանակ պարզել, թե
նա ինչ է արել կոլտնտեսության ամրացման և կուսակ-
ցության բոլոր դիրեկտիվները գյուղում կենսագործելու
համար:

Միաժամանակ հարկավոր է անցկացնել ընտրողների
նակազների կատարման մանրամասն ստուգում, պարզելով
իրենց պատգամավորի դերը նակազի առանձին կետերի
անցկացման մեջ: Նակազի կատարման ստուգման գործում
անհրաժեշտ է լայն օգտագործել թեթև հեծելազորը:

## ՆՅՈՒԹԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Խորհուրդների հաշվետվության համար իբրև նյութ
պետք է ծառայեն հենց խորհուրդի գործերը, որոնք ար-
տացոլում են նրա աշխատանքը, վերադաս գործկոմների
կողմից կատարված ստուգումների ակտերը, վերստուգիչ
հանձնաժողովների, ինքնաստուգման հանձնաժողովների և
թեթև հեծելազորի կողմից կատարված ստուգումների



3606.62

նյութերը և նմանապես խորհրդի սահմանում գտնվող կազ-
մակերպությունների և հիմնարկությունների գործունեյու-
թյան վերաբերյալ նյութերը:
Խորհուրդի հաշվետվության մեջ, նրա կողմից կատար-
ված տնտեսական միջոցառումների հետ զուգընթացաբար
պետք է մանրամասնորեն լուսաբանվեն այդ միջոցառում-
ների անցկացման մեթոդները, այսինքն՝ նրա կազմակերպ-
չական-մասսայական աշխատանքը, որը կայանում է սեկ-
ցիաների, պատգամավորական խմբակների և այլն աշխա-
տանքի ղեկավարման և կազմակերպման մեջ:
Խորհուրդի հաշվետվությունը չպետք է կրի նրա նվա-
ճումների հաշվառական ցանկի բնույթ, այլ պետք է լուսաբա-
նի նրա աշխատանքի մեջ կատարված նվաճումների հետ
միասին և ունեցած թերությունները ու նրանց պատճառ-
ները:

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:

Խորհուրդները նախ քան յելույթ ունենալը քաղաքա-
ցիների ընդհանուր հաշվետու ժողովներում, իբրև կանոն,
պետք է բանվորների, ծառայողների, կոլտնտեսականների
և այլն ժողովում անցկացնեն նախնական զեկուցներ, որ-
տեղ ստուգվում է հին նակազի կատարումը, նշվում է նոր
նակազի նախագիծը, քննության են առնվում ձայնազուրկ-
ների ցուցակները և հաշվետու ժողովների պատրաստման
վերաբերյալ հարցերը: Այդպիսի նախնական քննումից
հետո, խորհուրդի հաշվետվության մեջ մտցվում են այս
կամ այն փոփոխությունները, որ և հաստատվում է խոր-
հուրդի կողմից: Խորհուրդը նշանակում է իր ներկայացու-
ցիչներին ընտրողների ժողովներում հաշիվ տալու համար:

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆ-ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Խորհուրդների հաշվետվությունները պետք է կազմված

Гос. Библиотека
ZUUՌ-Арм.ССР

ցինեն վոչ միայն չոր ու ցամաք թվերից, կայացած նիստերի քանակի և քննված հարցերի մասին, այլ պետք է արտացոլեն խորհրդի ամբողջ աշխատանքը (տնտեսական, կուլտուրական, կազմակերպչական և քաղաքական):

Գյուղխորհուրդների հաշվետվություններում հատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հարցերին, ինչպիսիք են՝ կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումը, անասնապահության զարգացումը, տեխնիկական կուլտուրաների ամրապնդումը, բերքատվության բարձրացումը և պայքար կորուստների դեմ, հացի, մսի և այլ գյուղատնտեսական մթերքների պլանների կատարման կազմակերպումը, կոլտնտեսական առևտրի զարգացումը, օգնություն դպրոցական շինարարության և այլն, իսկ քաղաքային խորհուրդների հաշվետվություններում այնպիսի հարցերին—ինչպիսիք են՝ պայքար արդֆինպլանի ու աշխատավորների սննդի և մատակարարման համար, բնակարանային և կոմունալ շինարարության զարգացումը, կոոպերացիայի աշխատանքը, օժանդակություն յերկաթուղային տրանսպորտին, օգնություն գյուղին, կաթի և պտղաբանջարեղենի մերձքաղաքային բազայի ստեղծումը և այլն:

Բացի դրանից խորհուրդների հաշվետվություններում պետք է արտացոլվեն դրամական միջոցների մոբիլիզացիայի և բյուջետային շինարարության (փոխառություն, խնայողական գործ, տուրքեր, ինքնահարկում և այլն) հարցերը, հեղափոխական օրինականության ամրապնդումը, հասարակական սեփականության պահպանությունը, յերկրի պաշտպանության ունակության ամրացումը և այլն:

## ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ:

Խորհուրդից հետո իր աշխատանքի մասին հաշվետվություն պետք է տա խորհրդի վերստուգիչ հանձնաժողովը, վորը պետք է մատնանշի այն թերությունները, վորոնք



հայտնաբերված են իր կողմից խորհրդի աշխատանքի ստուգման և հետազոտման պրոցեսում, միաժամանակ մատնանշելով նաև քաղաքային և գյուղական խորհրդային ակտիվի մասնակցությունը վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքում: Հենց այստեղ հարկավոր է պատմել թե ինչպես են վերացվել հայտնաբերված թերությունները ու ինչպիսի ընդհանուր արդյունքներ են ունեցել վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքները:

## ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի լրումն խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունների, վորոնք կազմում են ժողովի որակարգի հիմնական հարցը, պետք է դնել նայած կարեվոր արտադրական կազմակերպությունների հարակից զեկուցումները, այն է՝ առանձին խոշոր ձեռնարկների, կոլտնտեսությունների, կոոպերացիայի, դպրոցների, ժողկապի և այլն: Ժողովը կարող է լսել նաև սեկցիաների, պատգամավորական խմբերի և առանձին պատգամավորների հաշվետվությունները: Խոշոր գյուղերում, բացի դրանից, պետք է դնել շրջգործկոմների հաշվետվությունները:

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:

Հաշվետվությունից հետո պետք է լայն կերպով քննություն առնել խորհրդի գործունեությունը: Այս դեպքում ամեն կերպ պետք է խուսափել ժամանակի վորևե սահմանափակումից: Ընտրողներին պետք է տալ լայն հնարավորություն խորհրդի աշխատանքի վերաբերյալ արտահայտվելու և այդ աշխատանքի բոլոր ճյուղերը քննադատության յենթարկելու համար:

Տալով աշխատավորներին լայն հնարավորություն խոր-

հուրդների աշխատանքը բազմակողմանի քննադատության ենթարկելու համար, միևնույն ժամանակ անհրաժեշտ է ամբողջ վճռականությամբ մերկացնել դասակարգային թշնամու ելույթները, վորոնց նպատակն է վարկաբեկել խորհրդային իշխանությունը:

Հաշվետու ժողովը պետք է անցկացնել խորացված ինքնաքննադատության, խորհրդային դեմոկրատիայի ծավալման, յերկրորդ հնգամյակի պլանների կատարման համար քաղաքի և գյուղի բանվորների, կոլտնտեսական և աշխատավոր լայն մասսաների մոբիլիզացիայի նշանաբանի տակ: Այդ ժողովներում պետք է հայտնաբերվեն խորհրդի աշխատանքի բոլոր թերությունները, նրանց վերացման և տեղերում աշխատանքը ավելի լավ կազմակերպելու նպատակով:

Պետք է աշխատել այդ ժողովներում գրավել ամբողջ աշխատավորությանը և ստեղծել ավելի բարենպաստ պայմաններ խորհուրդի հաշվետվությունը քննելու համար: Համապատասխան այդ բանի, ազգային փոքրամասնության շրջաններում անհրաժեշտ է ժողովները անցկացնել ազգային փոքրամասնության լեզվով, իսկ խառն շրջաններում— զուգընթացաբար մի քանի լեզուներով, վորոնք հասկանալի յեն բոլոր ժողովականներին:

# III. ՎԵՐՆԸՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱ

## ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ:

Հաշվետու ժողովից մի քանի որ հետո հրավիրվում է քաղաքացիների ընտրական ժողովը պատգամավորներ ընտրելու և նակազը հաստատելու համար: Հաշվետու և ընտրական ժողովների միջև յեղած ընդմիջումը չպետք է լինի չափազանց յերկարատև, վորովհետև այդ դեպքում թուլանում է հաշվելու ժողովներում տրված տնտեսա-քաղաքական խնդիրների սրությունը և ընտրողների ամբողջ ուշա-



դրությունը վերջին հաշվով կլանվում է ընտրությունների պրոցեսով:

Հաշվետու և ընտրական ժողովները մի որում անցկացնելը նույնպես վնասակար է, վորովհետև այդ դեպքում ընտրողը ծանրաբեռնված է լինում և հնարավորություն չի ունենում կենտրոնանալ իր առաջ դրված հարցերի շուրջը, մտածել խորհուրդների թեկնածուների մասին, անել առաջարկություններ նակազի վերաբերյալ յեվ այլն:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՂ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ:

Պետք է աշխատել ընտրական ժողովները ապահովել բոլոր ընտրողների մասնակցությամբ և կազմակերպել ընտրությանը ներկայացողների ճիշտ հաշվառում: Անհրաժեշտ է հիշել, վոր ընտրական ժողովը օրինավոր համարելու համար պահանջվում է ընտրողների ներկայությունը 50 տոկոսից վոչ պակաս, այսինքն պահանջվում է տվյալ ընտրական շրջանի բոլոր ընտրողների կեսի ներկայությունը: Գործը այնպես պետք է կազմակերպել, վոր ընտրողների չներկայանալու պատճառով ժողովը չքայքայվի: Ժողովը համարվում է օրինավոր, յեթե ժողովին ներկայացել է ընտրողների թվի կեսից վոչ պակաս, սակայն այդ չի նշանակում, վոր ընտրական հանձնաժողովները չպետք է ապահովեն բոլոր ընտրողների ներկայությունը ժողովին:

Ընտրողների ընտրական իրավունքները հեշտ իրականացնելու համար, օրենքը պարտավորեցնում է հիմնարկությունների և ձեռնարկությունների ղեկավարներին ազատել իրենց բանվորներին և ծառայողներին աշխատանքից հաշվետու և ընտրական ժողովներին ներկայանալու համար: Այս դեպքում բաց թողնված աշխատանքի ժամերը վարձատրվում են հիմնարկությունների և ձեռնարկությունների կողմից:

Ժողովներին կարող են ներկա լինել միմիայն ընտրող-

ները, ուստի ձայնազուրկներին ժողովներին թողնել չի կարելի:

Նախ քան ժողովի սկսվելը պետք է ճիշտ հաշվել և մտցնել արձանագրության մեջ ժողովին ներկա յեղող ընտրողների թիվը և պարզել ներկայացողների տոկոսը հանդեպ ընտրողների ընդհանուր թվի, վորպեսզի հետագայում կարելի լինի ստուգել ժողովի օրինավոր լինելը:

## ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՍԿԻԶԲԸ:

Ընտրական հանձնաժողովի ներկայացուցչի կողմից ժողովը բանալուց հետո ընտրվում է ժողովի նախագահություն, վորից հետո նախագահը ծանոթացնում է ժողովին ընտրությունների կարգի հետ, հրապարակելով ընտրական հրահանգի համապատասխան հոդվածները, հայտարարում է ընտրողների և ընտրություններին ներկայացողների թիվը և այլն:

Դրանից հետո քննվում յեվ հաստատվում է ընտրողների նակազը:

Հետո ժողովն անցնում է խորհուրդի անդամների ընտրություններին և ժողովի նախագահը հայտարարում է ընտրվողների ցուցակները և առանձին թեկնածությունների անունները, վորոնք ընտրվել են հենց ընտրական ժողովին կամ ժողովից առաջ, մատնանշելով թե ում կողմից են առաջարկված թեկնածուների ցուցակները կամ առանձին թեկնածությունները, նաև հայտարարում է այն անձանց թիվը վորոնք ընտրվելու յեն տվյալ ընտրական ժողովում:

## ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ:

Թեկնածությունները կարող են առաջադրվել հենց ընտրական ժողովին կամ ժողովից առաջ ինչպես հասարակական կազմակերպությունների (կուսակցություն, կոմյերիտմիություն, պրոֆմիությունները և այլն), այնպես և առանձին ընտրողների կողմից:



Չի թույլատրվում ընտրական հանձնաժողովներին կամ նրանց լիազորներին առաջարկել թեկնածություններ: Այս դեպքում չպետք է ճնշում գործ դնել ընտրողների կամքի վրա, վորոնք բոլորովին ազատ են այս կամ այն թեկնածության ընտրության կամ մերժման մեջ:

Խիստ հետևվելով խորհուրդների վերընտրության այս հիմնական սկզբունքին, առաջարկված թեկնածություններին պետք վերաբերվել մեծ ուշադրությամբ, թույլ չտալով այդ գործում ինքնահոսություն, վորի հետևանքով կարող է խորհուրդի անդամ անցնել վոչ հեղինակավոր, անաշխատունակ, նույնիսկ դասակարգայնորեն անհարազատ պատգամավորներ: Պետք է աշխատել, վոր խորհրդի մեջ անցնեն այնպիսի անդամներ, վորոնք աչքի յեն ընկնում վոչ թե միայն խորհրդային իշխանության անձնվեր քաղաքացիներ, այլ նայեվ իբրև գործարանի, խորհտնտեսության, կոլտնտեսության և այլ կազմակերպությունների լավագույն աշխատավորներ, իբրև հարվածայիններ, վորոնք տանում են իրենց հետևից ամբողջ մասսան արտադրական պլանները կատարելու գործում:

Վորպեսզի խորհուրդներում ընտրված լինեն վոչ թե պատահական մարդիկ, այլ այդ բարձր կոչմանը արժանի պատգամավորներ, հասարակական կազմակերպությունները պետք է վաղորոք պատրաստեն թեկնածուների նախնական ցուցակը, և քննեն այդպիսին բանվորների, կոլտնտեսականների յեվ այլ ժողովներին:

Ընթացիկ ընտրական կամպանիայում պետք է վճռական դարձ տալ կանանց խորհրդի անդամ ընտրելու գործին, սակայն կանանց թեկնածությունները նշանակելիս անհրաժեշտ է նրանց առաջ դնել նույնպիսի խիստ պահանջներ, ինչպիսի պահանջներ դրվում են տղամարդ թեկնածուների առաջ: Կանանց թեկնածությունները անհրաժեշտ է ընտրել լավագույն հարվածայինների թվից և ձեռնարկություններում հարվածայնության կազմակերպողներից, կոլ-

տնտեսության բրիգադաների կին բրիգադիրներից և կոլտնտեսության ֆերմաների ղեկավարներից, նմանապես քաղաքի և գյուղի այն աշխատավոր կանանցից, որոնք աչքի յեն ընկել իրենց հասարակական աշխատանքով:

Կոմյերիտականների թեկնածությունները դնելու վերաբերյալ ակտիվություն պետք է ցուցաբերեն գործարանների, խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, գյուղերի և այլն կոմյերիտմիության կազմակերպությունները: Այդ կազմակերպությունները պետք է հայտնաբերեն արտադրության մեջ աչքի ընկնող կոմյերիտականներին և դնեն նրանց թեկնածությունը խորհրդում:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ավելի հեղինակավոր և խորհրդային իշխանությանը մոտ կանգնած մենատնտեսներից թեկնածություններ առաջադրելու վրա, որոնք իրենց հետագա աշխատանքի պրոցեսում ոչ թե միայն կարող են անձամբ մտնել կոլտնտեսության մեջ, այլ տանել իրենց յետևից մնացած մենատնտեսներին:

Այդպիսով պատրաստելով խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակը, հասարակական կազմակերպությունները պետք է միջոցներ ձեռք առնեն լայնորեն ժողովրդականացնելու այդ ցուցակները, հայտարարելով լրագրներում, կախ տալով աչքի ընկնող տեղերում և այլն: Այդ ցուցակները հայտարարվում են ընտրողների ժողովներում: Ժողովը իրավասու յե ընդունել կամ չընդունել ինչպես ամբողջ ցուցակը, այնպես և ցուցակից՝ առանձին թեկնածությունները:

## ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼԸ

Թեկնածուների ցուցակը հայտարարելուց հետո անհրաժեշտ է հարց տալ ընտրողներին, չունի արդյոք ոչ մեկը հիշված թեկնածուների հանդեպ բացարկ, որից հետո պետք է անցնել թեկնածությունների քննությանը: Ժողովի ցանկությամբ կարող են լսել առանձին թեկնածու-



ների բնութագրերը և այլն: Այս դեպքում անհրաժեշտ է ցուցաբերել մեծ զգոնություն դասակարգային թշնամու ագենտուրայի ներս սողոսկելու (вылазка) վերաբերյալ, որը կաշխատի բացարկ հայտնել սոցիալիստական շինարարության փորձված մարտիկների հանդեպ և կառաջադրի խորհուրդի անդամ իր մարդկանց:

Հարկավոր է կազմակերպել ընտրողների մասսան այնպես, որպեսզի զրկել յենթակուլակներին և մյուս հակախորհրդային տարրերին խորհրդի անդամ ընտրվելու հնարավորությունից:

## ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Թեկնածուները քվեարկվում են բաց քվեարկությամբ, այսինքն ձեռքը բարձրացնելով: Ըստ ժողովի որոշման քվեարկությունը կարելի յե կատարել կամ ամբողջ ցուցակի, կամ առանձին թեկնածուների վերաբերյալ: Ձայները ուշադրությամբ հաշվվում են և գրվում են յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան կողքին, յեթե քվեարկվում է ոչ թե ցուցակը ամբողջությամբ, այլ առանձին թեկնածուները:

Բոլոր թեկնածությունների քվեարկումից հետո, հաշվվում է յուրաքանչյուր թեկնածուի համար տրված ձայների թիվը և ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է ավելի ձայն:

Քվեարկության ժամանակ, ինչպես նաև թեկնածությունների առաջադրման և քննության ժամանակ հարկավոր է խուսափել ընտրողների կամքի վրա որևէ ադմինիստրատիվ ճնշում գործ դնելուց:

## ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նույն կարգով կատարվում է խորհրդի անդամության թեկնածությունների ընտրությունը և նույնպես խորհրդի վերստուգիչ հանձնաժողովի անդամների և նրանց թեկնա-

ծուների ընտրությունը, ըստ որում վերստուգիչ հանձնաժողովում չեն ընտրվում այն անձինք, որոնք համարվում են գյուղխորհրդի անդամներ կամ թեկնածուներ. իսկ այն անձինք, որոնք վարում են գյուղխորհրդում պատասխանատու պաշտոն, նմանապես և գյուղխորհրդի նախագահները և նախագահության անդամները կարող են ընտրվել վերստուգիչ հանձնաժողովում միայն նախագահության կազմից դուրս գալուց կամ գյուղխորհրդում պատասխանատու պաշտոնը թողնելու որից մի տարի հետո:

## ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրական ժողովի ընթացքի և արդյունքների մասին պետք է կազմվի արձանագրություն ըստ սահմանված ձևի և ստորագրվի ընտրական ժողովի նախագահության կողմից:

Սրանով վերջանում է հաշվետու-վերընտրական կամպանիայի առաջին շրջանը, որից հետո արդեն անցնում են խորհուրդների գործադիր մարմինների կազմակերպմանը՝ խորհուրդի նախագահության ընտրություններին, նաև խորհուրդների շրջանային համագումարի պատգամավորների ընտրությանը, իսկ քաղաքներում, որոնք առանձնացված են իբրև ինքնուրույն ադմինիստրատիվ – տնտեսական միավորներ, խորհուրդների հանրապետական համագումարի պատգամավորների ընտրությանը:

Աշխատանքը ավարտելուց հետո ընտրական հանձնաժողովները ընտրությունների ամբողջ նյութերը հանձնում են համապատասխան խորհրդին կամ գործադիր կոմիտեյին:

## ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հաշվետու – վերընտրական կամպանիայի նախապատրաստման և անցկացման պրոցեսում անհրաժեշտ է կարգավորել ինֆորմացիոն աշխատանքը, այսինքն՝ հաղորդել



վերադաս մարմիններին տեղեկություններ ըստ սահմանված ձևերի և սահմանված ժամկետների: Նույնպես և հաղորդել շրջանային և կենտրոնական կազմակերպություններին կամպանիայի ընթացքում տեղի ունեցած թերությունների, դասակարգային թշնամու ելույթների և այլ երևույթների մասին:

Շրջաններում անհրաժեշտ է բարելավել ինֆորմացիոն աշխատանքը, իսկ որտեղ այդ աշխատանքը բացակայում է, շտապ կազմակերպել այդպիսին:

---

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ГЛАВНЕЙШИЕ МЕСТОРОЖДЕНИЯ ЦЕОЛИТОЛИТОВ АРМЕНИИ



И.Х.ПЕТРОСОВ
Р.Т.ДЖРБАШЯН
А.Х.МНАЦАКАНЯН

ՀՀ Ազգային գրադարան
NL0194290

Sed Marsed